«Նորման Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«Նորման Կրեդիտ» ՌԻՎԿ ՓԲԸ

Բովանդակություն

4	Անկախ աուդիտորի եզրակացություն
7	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
8	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
9	Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
10	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
12	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Կազմակերպական-իրավական ձևը՝	ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	տրամադրել վարկեր, ներգրավել փոխառություններ
Վարչության նախագահ՝	Առաքել Գաբրիելյան

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Նորման Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նորման Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը։

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ)։

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան։ Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում։
Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀԷՄՄԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները։ Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար։

Հանգամանքի շեշտադրում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությանն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 21(ա)-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո կորոնավիրուսի համավարակի տարածման հնարավոր ազդեցությունը Ընկերության գործունեության վրա։

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար։

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք։

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար։

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար
Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն։

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է։ Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա։

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն։ Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար։ Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա։ Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները համարժեք չեն, ձևափոխել մեր կարծիքը։ Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա։ Այնուամենայնիվ, ապագայում տեղի ունեցող դեպքերը կամ ի հայտ եկող հանգամանքները կարող են ստիպել կազմակերպությանը դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը։

Հեռ.՝ +37460 528899
էլ. փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Կառավարման օղակներում գտնվող անձանց և ղեկավարությանը հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին::

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

16 հունիս, 2020թ.
ք.Երևան

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ ինտերնեշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ

«Նորման Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	333,283	67,950
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	5	(36,384)	(4,911)
Զուտ տոկոսային եկամուտ		**296,899**	**63,039**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		32,553	15,645
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(1,779)	(1,562)
Այլ գործառնական եկամուտ		4,606	2,430
Արտարժութային տարբերություններից զուտ օգուտ		1,556	1,520
Գործառնական եկամուտ		**333,835**	**81,072**
Արժեզրկումից կորուստներ	6	(43,798)	(29,848)
Անձնակազմի գծով ծախսեր		(125,920)	(66,103)
Վարչական ծախսեր	7	(86,545)	(40,733)
Շահույթ/(վնաս) մինչև հարկվելը		**77,572**	**(55,612)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	8	(18,116)	11,013
Շահույթ/(վնաս) հարկումից հետո		**59,456**	**(44,599)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումներից օգուտներ		103,434	5,715
Այլ համապարփակ եկամտին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	15	(18,504)	(1,143)
		84,930	**4,572**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**144,386**	**(40,027)**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-43) հաստատվել են Նորման Կրեդիտ ՈՒՎԿ ՓԲԸ ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 16-ին, ստորագրությամբ՝

Վարչության նախագահ
Առաքել Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ
Հասմիկ Մամյան

«Նորման Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	31.12.2019թ. հազար դրամ	31.12.2018թ. հազար դրամ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	66,749	143,775
Բանկային ավանդներ	10	-	398,141
Ներդրումային արժեթղթեր	11		
- Ընկերության կողմից պահվող		360,693	330,240
- Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված		771,767	-
Հաճախորդներին տրված վարկեր	13	3,702,099	1,731,133
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	12	119,677	29,855
Այլ ակտիվներ		6,880	4,971
Ընդամենը ակտիվներ		**5,027,865**	**2,638,115**
Պարտավորություններ			
Ներգրավված փոխառություններ	14	485,376	405,201
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով		702,678	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	24,598	1,975
Ընթացիկ հարկի գծով պարտավորություններ		12,812	-
Այլ պարտավորություններ		27,877	22,786
		1,253,341	**429,962**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	16	3,621,600	2,200,800
Լրացուցիչ կապիտալ		48,565	47,380
Իրական արժեքի պահուստ ներդրումային արժեթղթերի գծով		89,502	4,572
Կուտակված շահույթ/(վնաս)		14,857	(44,599)
		3,774,524	**2,208,153**
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		**5,027,865**	**2,638,115**

«Նորման Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2019թ. **հազ. դրամ**	**2018թ.** **հազ. դրամ**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	327,578	58,189
Վճարված տոկոսներ	(18,694)	(40)
Ստացված կոմիսիոն գումարներ	32,553	15,645
Վճարված կոմիսիոն գումարներ	(1,779)	(1,562)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	4,226	5,138
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(122,159)	(62,061)
Ստացված այլ եկամուտ	4,606	5,111
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(63,892)	(36,210)
Զուտ գործառնական ակտիվների (աճ)/ նվազում		
Բանկային ավանդներ	400,000	(400,000)
Հաճախորդներին տրված վարկեր	(2,015,671)	(1,752,807)
Ներդրումային արժեթղթեր	(699,397)	(329,908)
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	702,072	-
Այլ ակտիվներ	(1,909)	(4,973)
Այլ պարտավորություններ	1,330	6,276
Գործառնական **գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ**	**(1,451,136)**	**(2,497,202)**
Ներդրումային **գործունեությունից դրամական միջոցների հոսքեր**		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(27,801)	(20,725)
Ներդրումային **գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ**	**(27,801)**	**(20,725)**
Ֆինանսավորման **գործունեությունից դրամական միջոցների հոսքեր**		
Կանոնադրական կապիտալի համալրում	1,420,800	2,200,800
Փոխառությունների ավելացում	-	460,047
Վարձակալության գծով պարտավորության մայր գումարի մարում	(11,861)	-
Վարձակալության գծով պարտավորության տոկոսագումարի մարում	(5,869)	-
Ֆինանսավորման **գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ**	**1,403,070**	**2,660,847**
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	**(75,867)**	**142,920**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,450)	1,420
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	144,340	-
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում (ծանոթագրություն 9)	**67,023**	**144,340**

«Նորման Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Իրական արժեքի պահուստ ներդրումային արժեթղթերի գծով հազ. դրամ	Կուտակված շահույթ/ (վնաս) հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-	-
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Հաշվետու ժամանակաշրջանի վնաս	-	-	-	(44,599)	**(44,599)**
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	4,572	-	**4,572**
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ			**4,572**	-	**4,572**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ	-	-	**4,572**	**(44,599)**	**(40,027)**
Բաժնետերերի հետ գործարքներ					
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	2,200,800	-	-	-	2,200,800
Լրացուցիչ կապիտալ	-	47,380	-	-	47,380
Ընդամենը բաժնետերերի հետ գործարքներ	**2,200,800**	**47,380**	-	-	**2,248,180**
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,200,800**	**47,380**	**4,572**	**(44,599)**	**2,208,153**
Ընդամենը համապարփակ եկամուտ					
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ	-	-	-	59,456	59,456
Այլ համապարփակ եկամուտ					
Իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	84,930	-	84,930
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	**84,930**	-	**84,930**
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ	-	-	**84,930**	**59,456**	**144,386**
Բաժնետերերի հետ գործարքներ					
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	1,420,800	-	-	-	1,420,800
Լրացուցիչ կապիտալի ճշգրտում կապված հետաձգված հարկի դրույքի փոփոխման հետ	-	1,185	-	-	1,185
Ընդամենը բաժնետերերի հետ գործարքներ	**1,420,800**	**1,185**	-	-	**1,421,985**
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,621,600**	**48,565**	**89,502**	**14,857**	**3,774,524**

1. Ընկերության վերաբերյալ

«Նորման Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 27.04.2018թ-ի թիվ 53Ա որոշմամբ գրանցվել և լիցենազավորվել է որպես «ՆՈՐՄԱՆ ԿՐԵԴԻՏ» ՌԻՎԿ ՓԲԸ-ի: Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է 2018 թվականի հունիսի 1-ից, որի հիմնական գործունեությունը սպառողական, հիփոթեքային և ձեռնարկատիրական վարկերի տրամադրումն է անհատներին և իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում «Օդենսսնուս Էյ Բի» ՍՊ ընկերությունը (գրանցված՝ Շվեդիայի Թագավորությունում 06.05.2013թ.), որին պատկանում է ընկերության 100% բաժնեմասը:

Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա 12, 3 տարածք հասցեում գտնվող գլխավոր գրասենյակի և Կոմիտասի 34, 55 տարածքում գտնվող մասնաճյուղի միջոցով:

Գործարար միջավայր

Կազմակերպությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են ղեկավարության գնահատականը Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»;
- ՖՀՄՄԿ 23 «Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն»:

Նշվածներից ՖՀՄՄԿ 23 «Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն» չունի նշանակալի ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն ստանդարտների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա ներկայացված է ծանոթագրություն 19-ում:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել և որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած դատողությունների, գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է ստորև՝

- *Ֆինանսական ակտիվների դասակարգում.* այն բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակներում պահվում են ակտիվները և պայմանագրային դրույթների գնահատումը, որոշելու համար, թե արդյո՞ք որոշակի ամսաթվերին առաջացող դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ – Ծանոթագրություն 20;
- *Ֆինանսական գործիքների արժեզրկում.* գնահատում, թե արդյո՞ք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, միևնույն պարտքային ռիսկի բնութագիր ունեցող ակտիվների խմբավորումը, սպասվելիք պարտքային վնասի գնահատումը՝ այդ թվում ապագայի կանխատեսմանը վերաբերող տեղեկատվության օգտագործմամբ;
- *Վարձակալություն* - Վարձակալության ժամկետի որոշումը որոշ վարձակալությունների դեպքում, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ, վարձակալության գծով պարտավորության զեղչման տոկոսադրույքի որոշումը (ծնթ.15):

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված);*

- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտարկելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից;*

- *Մակարդակ 3. Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա):*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Վարկային ռիսկ;
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ;
- Արտարժութային ռիսկ;
- Իրացվելիության ռիսկ;

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Հաճախորդներին տրված վարկեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Բանկային ավանդներ
- Ներդրումային արժեթղթեր
- Ներգրավված փոխառություններ
- Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	3,702,099	1,731,133
Բանկային ավանդներ	-	398,141
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,749	143,775
	3,768,848	**2,273,049**

Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ներդրումային արժեթղթեր	1,132,460	330,240
	1,132,460	**330,240**

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Ներգրավված փոխառություններ	485,376	405,201
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	702,678	-
	1,188,054	**405,201**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկային ավանդները, ներդրումային արժեթղթերը, հաճախորդներին տրված վարկերը, հետգնման պայմանագրերը և ներգրավված փոխառությունները:

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի դիտարկելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Ընկերության հիմնական գործունեությունը վարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի վարկային կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Զգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Վարկավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է վարկային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են վարչության և վարկային կազմակերպության խորհրդի կողմից:

Վարչություն ներկայացվող տեղեկատվությունը վարկային մասնագետի կողմից հաճախորդի նախնական հայտի, նրա բիզնեսի և վարկային ռիսկերի պատշաճ ուսումնասիրության հիման վրա կատարված նախնական վերլուծական տեղեկություններ են, որոնց ճշգրտությունը համեմատական եղանակով ստուգում են նաև վարկային բաժնի մասնագետները: Ի վերջո Վարչության անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):
Վարչության նախագահը կոչված է բացահայտելու գործառնական, վարկային, պրոդուկտային ռիսկերի բացահայտման համար:
Ընկերության վարկերի տրամադրման և սպասարկման ընթացակարգի համաձայն վարկային մասնագետները, գործառնական բաժինը, անվտանգությունը համապատասխանաբար ուսումնասիրում են ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ են լինում ժամկետանց վարկերի հավաքագրման ուղղությամբ: Վարչության նախագահի վերահսկողությամբ իրականացվում է ժամկետանց վարկերի հետ աշխատանքների կազմակերպումը:

Ընկերության բոլոր վարկերը ապահովված են վարկառուների և/կամ այլ անձանց անձնական երաշխավորություններով, անշարժ և շարժական գույքով, ինչպես նաև շրջանառու միջոցներով:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության պարտքային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է անհատական ռիսկերից, և ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ.

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	3,702,099	1,731,133
Բանկային ավանդներ	-	398,141
Ներդրումային արժեթղթեր	1,132,460	330,240
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,102	106,273
	4,861,661	**2,565,787**

Արժեզրկման պահուստ
Ընկերությունը սահմանում է պահուստ արժեզրկումից կորուստների գծով, որն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվներում սպասվող պարտքային վնասների գնահատումը: Սպասվող պարտքային վնասի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը տես ծանոթագրություն 20-ում:

Աշխարհագրական կենտրոնացում
Ընկերության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության տարածքով:

Դրամական միջոցներ բանկում
Ընկերությունը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ընկերության կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունները վստահելի են և հեղինակավոր:

Շուկայական ռիսկ
Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է՝ տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծության մոնիտորինգի միջոցով: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 6 Ամիս հազ. դրամ	6-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,749	-	-	-	-	66,749
Ներդրումային արժեթղթեր	16,814	8,908	-	-	1,106,738	1,132,460
Հաճախորդներին տրված վարկեր	230,604	250,030	530,794	2,274,026	416,645	3,702,099
	314,167	**258,938**	**530,794**	**2,274,026**	**1,523,383**	**4,901,308**
Պարտավորություններ						
Ներգրավված փոխառություններ	4,019	6,388	8,536	466,433	-	485,376
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	702,678	-	-	-	-	702,678
	706,697	**6,388**	**8,536**	**466,433**	**-**	**1,188,054**
	(392,530)	**252,550**	**522,258**	**1,807,593**	**1,523,383**	**3,713,254**

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 6 Ամիս հազ. դրամ	6-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը հազ. Դրամ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	143,775	-	-	-	-	143,775
Բանկային ավանդներ	398,141	-	-	-	-	398,141
Ներդրումային արժեթղթեր	-	-	-	-	330,240	330,240
Հաճախորդներին տրված վարկեր	127,213	135,040	466,503	938,206	64,171	1,731,133
	669,129	**135,040**	**466,503**	**938,206**	**394,411**	**2,603,289**
Պարտավորություններ						
Ներգրավված փոխառություններ	-	4,845	-	400,356	-	405,201
	-	**4,845**	**-**	**400,356**	**-**	**405,201**
	669,129	**130,195**	**466,503**	**537,850**	**394,411**	**2,198,088**

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը.

	31.12.2019թ. միջին արդյունավետ տոկոսադրույք		31.12.2018թ. միջին արդյունավետ տոկոսադրույք	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Բանկային ավանդներ	-	-	4.5	-
Ներդրումային արժեթղթեր	10.7	-	10.5	-
Հաճախորդներին տրված վարկեր	23.7	10.6	23.17	7.6
Տոկոսակիր պարտավորություններ				
Ներգրավված փոխառություններ	10.1	5.0	-	5

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված են վերջիններիս գործառնական արժույթից տարբեր արժույթով:

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝

Ֆինանսական ակտիվներ/(պարտավորություններ) արտարժույթով

ԱՄՆ դոլար	31.12.2019 թ. հազար դրամ	31.12.2018թ. հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,755	8,470
Հաճախորդներին տրված վարկեր	579,292	537,422
Ընդամենը ակտիվներ	**581,047**	**545,892**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներգրավված փոխառություններ	(412,563)	(405,201)
Ընդամենը պարտավորություններ	**(412,563)**	**(405,201)**
Զուտ դիրքը	**168,484**	**140,691**

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների՝ ՀՀ դրամով չափման համար Ընկերությունը կիրառել է նույն ամսաթվին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքը՝ 479.7 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց: Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների ավելացմանը՝ 16,848 հազար դրամի չափով, իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների նվազմանը՝ նույն չափով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի առնվազն 45 օրվա ընթացքում կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Ընկերությունը նաև փորձում է նվազեցնել իրացվելիության ռիսկը՝ ներգրավելով հաստատուն տոկոսադրույքով փոխառություններ. վերջիններիս մասին ներկայացվել է «Տոկոսադրույքային ռիսկ» բաժնում:

Ընկերության իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության գանձապետական գործառույթի միջոցով: Ցանկացած գործառնության համար Ընկերության կողմից նախատեսվում են համապատասխան միջոցներ, որոնց գումարը կախված է բյուջեից: Բյուջեն հաստատվում է Խորհրդի կողմից՝ այսպիսով հնարավոր դարձնելով դրամական միջոցների գծով Ընկերության կարիքների կանխատեսումը: Երբ գումարը գերազանցում է որոշակի սահմանաչափը, անհրաժեշտ է ստանալ նաև Խորհրդի հաստատումը:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	Ընդամենը հազ.դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Վարկեր և փոխառություններ	1,915	3,830	26,374	547,727	579,846	485,376
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	703,890	-	-	-	703,890	702,678
	705,805	**3,830**	**26,374**	**547,727**	**1,283,736**	**1,188,054**

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	Ընդամենը հազ.դրամ	Հաշվեկշռային արժեք հազ. դրամ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Վարկեր և փոխառություններ	-	2,241	-	503,278	505,519	405,201
	-	**2,241**	**-**	**503,278**	**505,519**	**405,201**

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն՝ ըստ հաշվեկշռային հոդվածների ներկայացվում է ստորև՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավելի հազ. դրամ	Ժամկետանց հազ. դրամ	Անժամկետ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,749	-	-	-	-	-	-	66,749
Ներդրումային արժեթղթեր	-	-	25,722	-	1,106,738	-	-	1,132,460
Հաճախորդներին տրված վարկեր	67,709	162,895	778,343	2,274,027	416,644	2,481	-	3,702,099
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	-	119,677	119,677
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	6,880	6,880
Ընդամենը ակտիվներ	**134,458**	**162,895**	**804,065**	**2,274,027**	**1,523,382**	**2,481**	**126,557**	**5,027,865**
Պարտավորություններ								
Ներգրավված փոխառություններ	-	4,019	14,924	466,433	-	-	-	485,476
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	702,678	-	-	-	-	-	-	702,678
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	24,598	-	-	24,598
Ընթացիկ հարկի գծով պարտավորություններ	-	-	12,812	-	-	-	-	12,812
Այլ պարտավորություններ	-	-	-	-	-	-	27,877	27,877
Ընդամենը պարտավորություններ	**702,678**	**4,019**	**27,736**	**466,433**	**24,598**	**-**	**27,877**	**1,253,441**
Զուտ դիրք	**(568,220)**	**158,876**	**776,329**	**1,807,594**	**1,498,784**	**2,481**	**98,680**	**3,774,424**

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն՝ ըստ հաշվեկշռային հոդվածների ներկայացվում է ստորև՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավելի հազ. դրամ	Ժամկետանց հազ. դրամ	Անժամկետ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	143,775	-	-	-	-	-	-	143,775
Բանկային ավանդներ	398,141	-	-	-	-	-	-	398,141
Ներդրումային արժեթղթեր	-	-	-	-	330,240	-	-	330,240
Հաճախորդներին տրված վարկեր	43,839	80,090	601,543	938,206	64,171	3,284	-	1,731,133
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	-	-	-	-	-	-	29,855	29,855
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	4,971	4,971
Ընդամենը ակտիվներ	**585,755**	**80,090**	**601,543**	**938,206**	**394,411**	**3,284**	**34,826**	**2,638,115**
Պարտավորություններ								
Ներգրավված փոխառություններ	-	-	4,845	400,356	-	-	-	405,201
Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	1,975	-	-	1,975
Այլ պարտավորություններ	-	-	-	-	-	-	22,786	22,786
Ընդամենը պարտավորություններ	**-**	**-**	**4,845**	**400,356**	**1,975**	**-**	**22,786**	**429,962**
Զուտ դիրք	**585,755**	**80,090**	**596,698**	**537,850**	**392,436**	**3,284**	**12,040**	**2,208,153**

Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: ՀՀ կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների եթե վարկային կազմակերպությունները կանխիկ ձևով գնում և/կամ վաճառում են արտարժույթ, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 1,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն ընդհանուր կապիտալ:

Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	31.12.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Ներգրավված փոխառություններ	485,376	405,201
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	702,678	-
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,749	143,775
Զուտ պարտք	**1,121,305**	**261,426**
Սեփական կապիտալ	**3,774,524**	**2,208,153**
Զուտ պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն (%)	**0.30**	**0.12**

5. Զուտ տոկոսային եկամուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	260,163	40,951
Ներդրումային արժեթղթեր	69,984	13,958
Բանկային ավանդներ և ընթացիկ հաշիվ	3,136	13,041
	333,283	**67,950**
Տոկոսային ծախս		
Ներգրավված փոխառություններ	(19,845)	(4,911)
Պարտավորություններ հետգնման պայմանագրերի գծով	(10,670)	-
Պարտավորություններ վարձակալության գծով	(5,869)	-
	(36,384)	**(4,911)**
Զուտ տոկոսային եկամուտ	**296,899**	**63,039**

6. Արժեզրկումից կորուստներ, զուտ

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	45,570	25,223
Բանկային ավանդներ	(2,092)	2,092
Ներդրումային արժեթղթեր	611	1,968
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(291)	565
	43,798	**29,848**

7. Վարչական ծախսեր

	2019թ.	2018թ.

	հազ. դրամ	հազ. դրամ
Մաշվածություն, ամորտիզացիա	22,653	4,523
Վարկի տրամադրման գծով ծախսեր	17,622	2,643
Գովազդի և մարքեթինգի ծախսեր	11,532	5,572
Պահպանության ծախսեր	8,888	4,844
Չփոխհատուցվող հարկեր ու տուրքեր	7,256	2,157
Գրասենյակային ծախսեր	7,111	3,825
Ծրագրի սպասարկման ծախսեր	3,963	3,680
Աուդիտ, խորհրդատվություն	2,450	2,200
Վարձակալություն	-	9,171
Այլ	5,070	2,118
	86,545	**40,733**

8. Շահութահարկի գծով ծախս

	31/12/2019թ. հազ. դրամ	31/12/2018թ հազ. դրամ
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	12,812	-
Հետաձգված հարկի գծով հարկային ծախս/(եկամուտ) (Ծան.15)	5,304	(11,013)
	18,116	**(11,013)**

Հաշվետու տարվա համար Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 20% (2018թ.-20%): 2020թ.-ից շահութահարկի դրույքաչափը սահմանվել է 18%:

Հաշվետու տարվա շահութահարկը հաշվարկվել է կիրառելով 20% դրույքը, իսկ 31.12.2019թ.-ի դրությամբ հետաձգված հարկային ակտիվը հաշվարկվել է կիրառելով 18% դրույքը:

Տարվա փաստացի հարկային ծախսերի և Հայաստանում շահութահարկի սահմանված դրույքի (20%) միջև տարբերության մանրամասները ներկայացված են ստորև.

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2019թ.		2018թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	**77,572**		**(55,612)**	
Շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում)՝ 20%	15,514	20.0%	(11,122)	20.0%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր, զուտ	1,968	2.5%	109	0.2%
Հարկային օրենսդրության փոփոխության ազդեցությունը	634	0.8%	-	-
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում) և արդյունավետ հարկային դրույք	**18,116**	**23.3%**	**(11,013)**	**20.2%**

9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31/12/2019թ հազ. դրամ	31/12/2018թ հազ. դրամ
Կանխիկը դրամարկղում	39,646	37,502
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում	27,376	106,838
Ընդամենը դրամական միջոցներ դրամական միջոցների հաշվետվություններում	**67,023**	**144,340**
Պարտքային կորստի պահուստ	(274)	(565)
	66,749	**143,775**

10. Բանկային ավանդներ

	31/12/2019թ հազ. դրամ	31/12/2018թ հազ. դրամ
Բանկերում ներդրված ավանդներ	-	400,233
Պարտքային կորստի պահուստ	-	(2,092)
	-	**398,141**

11. Ներդրումային արժեթղթեր

	31/12/2019թ. հազ. դրամ	31/12/2018թ. հազ. դրամ
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթեր - ՀՀ Կառավարության թողարկած պետական պարտատոմսեր		
- Ընկերության կողմից պահվող	360,693	330,240
- Հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	771,767	-
	1,132,460	**330,240**
Պարտքային կորստի պահուստ	(2,579)	(1,968)

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են ներդրումային արժեթղթերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար.

	Փուլ 1 հազար դրամ	Փուլ 2 հազար դրամ	Փուլ 3 հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**(1,968)**	**-**	**-**	**(1,968)**
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	1,149	-	-	1,149
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(1,760)	-	-	(1,760)
Մարված ակտիվներ	-	-	-	-
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(2,579)**	**-**	**-**	**(2,579)**

	Փուլ 1 հազար դրամ	Փուլ 2 հազար դրամ	Փուլ 3 հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթեր				
Մնացորդը 2018թ. մայիսի 1-ի դրությամբ	-	-	-	-
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	-	-	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	-	-	-	-
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(1,968)	-	-	(1,968)
Մարված ակտիվներ	-	-	-	-
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,968)	-	-	(1,968)

12. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Համակրգչ. Սարքավ. հազ.դրամ	Գրասեն. գույք հազ.դրամ	Այլ տնտեսական գույք հազ.դրամ	Համակարգչ. ծրագրեր հազ.դրամ	Օգտագործման իրավունքով ակտիվներ հազ.դրամ	Վարձակալված տարածքների բարելավումներ հազ.դրամ	Ընդամենը հազ.դրամ
Սկզբնական արժեք							
Մնացորդը առ 01.05.2018թ. (հիմնադրման ամսաթվի դրությամբ)	-	-	-	-	-	-	-
Ձեռքբերում	10,418	8,649	7,958	7,353	-	-	34,378
Մնացորդը առ 31.12.2018թ.	**10,418**	**8,649**	**7,958**	**7,353**	**-**	**-**	**34,378**
Օգտագործման իրավունքի ակտիվների սկզբնական ճանաչում ըստ ՖՀՄՍ 16-ի	-	-	-	-	84,674	-	84,674
Ձեռքբերում	4,173	3,575	3,876	7,400	-	8,777	27,801
Դուրսգրում	-	-	-	(500)	-	-	(500)
Մնացորդը առ 31.12.2019թ.	**14,591**	**12,224**	**11,834**	**14,253**	**84,674**	**8,777**	**146,353**
Կուտակված մաշվածություն							
Մնացորդը առ 01.05.2018թ. (հիմնադրման ամսաթվի դրությամբ)	-	-	-	-	-	-	-
Տարվա ծախս	(1,876)	(1,246)	(585)	(816)	-	-	(4,523)
Մնացորդը առ 31.12.2018թ.	**(1,876)**	**(1,246)**	**(585)**	**(816)**	**-**	**-**	**(4,523)**
Տարվա ծախս	(3,518)	(1,541)	(1,333)	(1,267)	(14,744)	(250)	(22,653)
Դուրսգրում	-	-	-	500	-	-	500
Մնացորդը առ 31.12.2019թ.	**(5,394)**	**(2,787)**	**(1,918)**	**(1,583)**	**(14,744)**	**(250)**	**(26,676)**
Զուտ հաշվեկշռային արժեք							
Մնացորդը առ 01.05.2018թ.	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Մնացորդը առ 31.12.2018թ.	8,542	7,403	7,373	6,537	-	-	29,855
Մնացորդը առ 31.12.2019թ.	**9,197**	**9,437**	**9,916**	**12,670**	**69,930**	**8,527**	**119,677**

Ընկերությունը վարձակալում է իր գլխամասային գրասենյակի և մասնաճյուղի տարածքները, վարձակալության ժամկետը կազմում է մինչև 2023-2024 թվականները: Վերևում բերված աղյուսակը ներկայացնում է օգտագործման իրավունքի ակտիվների շարժը տարվա ընթացքում: Ծանոթագրություն 14-ում ներկայացված է վարձակալության գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն:

13. Վարկեր հաճախորդներին

Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկեր	31/12/2019թ. հազար դրամ	31/12/2018թ. հազար դրամ
Իրավաբանական անձանց տրված բիզնես վարկեր		
Բիզնես վարկեր փոքր և միջին ընկերություններին	2,124,624	1,024,858
Ընդամենը իրավաբանական անձանց տրված վարկեր	**2,124,624**	**1,024,858**
Անհատներին տրված վարկեր		
Սպառողական վարկեր	1,187,765	697,631
Հիփոթեքային վարկեր	440,146	31,931
Ընդամենը անհատներին տրված վարկեր	**1,627,911**	**730,867**
Ամորտիզացված արժեքով հաճախորդներին տրված համախառն վարկեր	**3,752,535**	**1,754,420**
Պարտքային կորստի պահուստ	(50,436)	(23,287)
Ամորտիզացված արժեքով հաճախորդներին տրված զուտ վարկեր	**3,702,099**	**1,731,133**

2019թ. դեկտեմբեռրի 31-ի դրությամբ վարկային պորտֆելը խմբավորված է երեք փուլերի.

- Փուլ 1-ում ներառված են այն վարկերը, որոնց համար գնահատվել է 12 ամսյա ակնկալվող պարտքային կորստի պահուստը:
- Փուլ 2-ում ներառված են այն վարկերը, որոնք պարտքային առումով արժեզրկված չեն, սակայն որոնց պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է և ակնկալվող պարտքային կորուստը հաշվարկված է ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի համար:
- Փուլ 3-ում ներառված են այն վարկերը, որոնք պարտքային առումով արժեզրկված են, և որոնց համար ակնկալվող պարտքային կորուստը հաշվարկվել է ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

	Փուլ 1 հազար դրամ	Փուլ 2 հազար դրամ	Փուլ 3 հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	2,124,624	-	-	2,124,624
Ընդամենը համախառն բիզնես վարկեր	**2,124,624**	**-**	**-**	**2,124,624**
Պարտքային կորստի պահուստ	(23,838)	-	-	(23,838)
Ընդամենը զուտ բիզնես վարկեր	**2,100,786**	**-**	**-**	**2,100,786**
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	1,099,073	26,691	41,094	1,166,858
- 31-ից 60 օր ժամկետանց	250	16,802	-	17,052
- 61-ից 90 օր ժամկետանց	-	3,855	-	3,855
- 91 և ավել օր ժամկետանց	-	-	-	-

Ընդամենը համախառն սպառողական վարկեր	**1,099,323**	**47,348**	**41,094**	**1,187,765**
Պարտքային կորստի պահուստ	(16,932)	(4,853)	(4,255)	(26,040)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր	**1,082,391**	**42,495**	**36,839**	**1,161,725**
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	440,146	-	-	440,146
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**440,146**	**-**	**-**	**440,146**
Պարտքային կորստի պահուստ	(558)	-	-	(558)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**439,588**	**-**	**-**	**439,588**
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	**3,664,093**	**47,348**	**41,094**	**3,752,535**
Պարտքային կորստի պահուստ	(41,328)	(4,853)	(4,255)	(50,436)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	**3,622,765**	**42,495**	**36,839**	**3,702,099**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

	Փուլ 1 հազար դրամ	Փուլ 2 հազար դրամ	Փուլ 3 հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	1,024,857	-	-	1,024,857
Ընդամենը համախառն բիզնես վարկեր	**1,024,857**	**-**	**-**	**1,024,857**
Պարտքային կորստի պահուստ	(8,518)	-	-	(8,518)
Ընդամենը զուտ բիզնես վարկեր	**1,016,339**	**-**	**-**	**1,016,339**
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	668,353	-	-	668,353
- 31-ից 60 օր ժամկետանց	-	2,388	-	2,388
- 60-ից 90 օր ժամկետանց	-	26,891	-	26,891
Ընդամենը համախառն սպառողական վարկեր	**668,353**	**29,279**	**-**	**697,632**
Պարտքային կորստի պահուստ	(4,220)	(10,292)	-	(14,512)
Ընդամենը զուտ սպառողական վարկեր	**664,133**	**18,987**	**-**	**683,120**

Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	31,931	-	-	31,931
Ընդամենը համախառն հիփոթեքային վարկեր	**31,931**	**-**	**-**	**31,931**
Պարտքային կորստի պահուստ	(257)	-	-	(257)
Ընդամենը զուտ հիփոթեքային վարկեր	**31,674**		**-**	**31,674**
Ընդամենը հաճախորդներին տրված համախառն վարկեր	**1,725,141**	**29,279**	**-**	**1,754,420**
Պարտքային կորստի պահուստ	(12,995)	(10,292)	-	(23,287)
Ընդամենը հաճախորդներին տրված զուտ վարկեր	**1,712,146**	**18,987**	**-**	**1,731,133**

Ստորև ներկայացված է 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում հաճախորդներին տրված համախառն վարկերի հաշվեկշռային արժեքների նշանակալի փոփոխությունները, որոնք էական ազդեցություն են ունեցել կորստի պահուստի փոփոխության վրա:

	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
	հազար դրամ	**հազար դրամ**	**հազար դրամ**	**հազար դրամ**
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	1,725,141	29,279	-	1,754,420
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	(25,274)	25,274	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	(59,515)	-	59,515	-
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	(886,387)	(7,205)	-	(893,592)
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	2,910,128	-	-	2,910,128
Դուրսգրումներ	-	-	(36,945)	(36,945)
Վերականգնումներ	-	-	18,524	18,524
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,664,093**	**47,348**	**41,094**	**3,752,535**

	Փուլ 1	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
	հազար դրամ	**հազար դրամ**	**հազար դրամ**	**հազար դրամ**
Մնացորդը 2018թ. մայիսի 1-ի դրությամբ	-	-	-	-
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	(29,279)	29,279	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-
Ամբողջությամբ կամ մասնակի մարված ֆինանսական ակտիվներ	-	-	-	-
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	1,754,420		-	1,754,420
Դուրսգրումներ	-	-	-	-
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,725,141**	**29,279**	**-**	**1,754,420**

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի գծով կորստի պահուստի սկզբնական և վերջնական մնացորդների համադրումը 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար.

	Փուլ 1 հազար դրամ	Փուլ 2 հազար դրամ	Փուլ 3 հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	(12,995)	(10,292)	-	(23,287)
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	4,853	(4,853)	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	13,193	9,483	(22,676)	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	3,286	-	-	3,286
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(43,732)	-	-	(43,732)
Մարված ակտիվներ	(5,933)	809	-	(5,124)
Դուրսգրումներ	-	-	36,945	36,945
Վերականգնումներ	-	-	(18,524)	(18,524)
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(41,328)**	**(4,853)**	**(4,255)**	**(50,436)**

	Փուլ 1 հազար դրամ	Փուլ 2 հազար դրամ	Փուլ 3 հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Մնացորդը 2018թ. մայիսի 1-ի դրությամբ	-	-	-	-
Փոխանցում 1-ին փուլ	-	-	-	-
Փոխանցում 2-րդ փուլ	10,292	(10,292)	-	-
Փոխանցում 3-րդ փուլ	-	-	-	-
Կորստի պահուստի զուտ վերաչափում	-	-	-	-
Ձեռք բերված նոր ֆինանսական ակտիվներ	(23,287)	-	-	(23,287)
Մարված ակտիվներ	-	-	-	-
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(12,995)**	**(10,292)**	**-**	**(23,287)**

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեքն՝ ըստ Ընկերության կողմից ստացված ապահովվածության տեսակի 2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31.12.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Պահանջի իրավունքի գրավ	432,004	436,938
Շրջանառու միջոցներ	191,182	396,222
Անշարժ գույքի	1,183,671	244,584
Երաշխավորություն	1,174,375	217,325
Շարժական գույք	352,219	165,249
Ոսկու և թանկարժեք քարերի	145,906	125,890
Փոխադրամիջոցների	159,320	75,569
Չապահովված վարկեր	63,422	68,956
	3,702,099	**1,731,133**

432,004 հազար դրամ գումարի վարկերը ապահովված են Ընկերության փոխկապակցված անձից ստացված փոխառության պահանջի իրավունքի չափով (ծանոթագրություն 14):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերն ըստ տնտեսության ճյուղերի.

	31.12.2019թ. հազ. դրամ	31.12.2018թ. հազ. դրամ
Առևտուր	1,211,102	409,743
Սննդի վերամշակում	515,575	608,546
Խմիչքների արտադրություն	392,717	-
Այլ	5,230	5,264
Անհատներին տրված վարկեր	1,627,911	730,867
Ակնկալվող կորստի պահուստ	(50,436)	(23,287)
	3,702,099	**1,731,133**

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի 4 փոխառու կամ փոխառուների կապակցված խմբեր, որոնց տրամադրված վարկերի մնացորդը գերազանցում է ընդհանուր կապիտալ 10%-ը: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկերի ընդհանուր մնացորդը կազմել է 1,957,979 հազար դրամ:

14. Ներգրավված փոխառություններ

հազ.դրամ	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	31.12.2019թ.	31.12.2018թ.
Չապահովված վարկեր կապակցված կողմից	ԱՄՆ դոլար	2023թ.	5.0%	412,563	405,201
Պարտավորություններ վարձակալության գծով	ՀՀ դրամ	2023-2024	10.1%	72,813	-
				485,376	**405,201**

Ընկերության միակ մասնակից հանդիսացող կապակցված կողմից տրված փոխառությունն ապահովված չէ, այն կրում է պայմանագրային 2% դրույք և սկզբնապես ճանաճվել է իրական արժեքով կիրառելով շուկայական 5% տոկոսադրույքը:

Պարտավորություններ վարձակալության գծով

Բոլոր վարձակալությունները հաշվառվել են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի և վարձակալական պարտավորության ճանաչման միջոցով, բացառությամբ՝

- վարձակալությունների, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, և
- կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս և պակաս ժամկետով)

Ընկերությունը վարձակալում է երկու գրասենյակային տարածք Երևան քաղաքում: Ընկերությունը ՖՀՄՍ 16-ին անցումը կատարել է 2019թ. հունվարի 1-ին առանց համեմատելի տվյալների վերաներկայացման: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կիրառված անցումային պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

ՖՀՄՍ 16 *Վարձակալություն* ստանդարտի համաձայն Ընկերությունը ճանաչելու է վաձակալված գրասենյակային տարածքը՝ որպես օգտագործման իրավունքով ակտիվ, և վարձակալության գծով պարտավորությունը: Մինչ այդ ամսաթիվը, այդ վարձակալությունը դիտարկվել է որպես գործառնական վարձակալություն, որով Ընկերությունը չի ճանաչել համապատասխան ակտիվը և պարտավորությունը, փոխարենը՝ վարձակալական վճարը ուղիղ-գծային մեթոդով ծախսագրել է վարձակալական ժամանակաշրջանի ընթացքում:

Ֆինանսավորման գործունեությունից ստացվող դրամական հոսքերի համադրում 2019թ.դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար.

	Չապահովված վարկեր կապակցված կողմից	Պարտավորու-թյուններ վարձակալության գծով	Ընդամենը
Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	405,201	-	405,201
Վարձակալության գծով պարտավորության ճանաչում համաձայն ՖՀՄՍ 16-ի	-	84,674	84,674
Տոկոսային ծախս (Ծան. 5)	19,845	5,869	25,714
Տարվա ընթացքում Ֆինանսական պարտավորությունների մարումներ	-	(11,861)	(11,861)
Վճարված տոկոսներ	(9,092)	(5,869)	(14,961)
Արտարժութային գործարքներից ստացված զուտ օգուտ/(վնաս)	(3,391)	-	(3,391)
Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**412,563**	**72,813**	**485,376**

15. Հետաձգված հարկային պարտավորություն

Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

հազ.դրամ	1 հունվարի 2019թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2019թ.
Հիմնական միջոցներ	-	(12,587)	-	-	(12,587)
Ներդրումային արժեթղթեր	(1,143)	-	-	(18,504)	(19,647)
Հաճախորդներին տրված վարկեր	2,645	(1,106)	-	-	1,539
Ներգրավված փոխառություններ	(11,324)	15,067	1,185	-	4,928
Այլ պարտավորություններ	1,483	(237)	-	-	1,246
Այլ ակտիվներ	38	(115)	-	-	(77)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված վնաս	6,326	(6,326)	-	-	-
Հարկային պարտավորություններ	**(1,975)**	**(5,304)**	**1,185**	**(18,504)**	**(24,598)**

հազ.դրամ	1 հունվարի 2018թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2018թ.
Ներդրումային արժեթղթեր	-	-	-	(1,143)	(1,143)
Հաճախորդներին տրված վարկեր	-	2,645	-	-	2,645
Այլ պարտավորություններ	-	1,483	-	-	1,483
Այլ ակտիվներ	-	38	-	-	38
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված վնաս	-	6,326	-	-	6,326
Ներգրավված փոխառություններ	-	521	(11,845)	-	(11,324)
Հարկային պարտավորություններ	**-**	**11,013**	**(11,845)**	**(1,143)**	**(1,975)**

16. Կանոնադրական կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 3,621,600 հազար դրամ արժողությամբ 150,900 բաժնեմասից: Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 24,000 դրամ: 2019թ. ընթացքում թողարկվել է լրացուցիչ 59,200 բաժնետոմս յուրաքանչյուրը 24,000 դրամ անվանական արժեքով, որի արդյունքում լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը կազմել են 1,420,800 հազար դրամ:

17. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությունն ունի մեկ մասնակից «Օդենսսնուս Էյ ԲԻ» ՍՊ ընկերությունը (գրանցված՝ Շվեդիայի Թագավորությունում 06.05.2013թ.), որին պատկանում է ընկերության 100% բաժնեմասը, վերջինս հանդիսանում է Գիվիտոն Հոլդինգ Էյ ԲԻ ՍՊ ընկերության դուստր ընկերություն (գրանցված՝ Շվեդիայի Թագավորությունում), որի 100% բաժնեմասը պատկանում է Գևորգ Նալբանդյանին:

Ստորև ներկայացված են կապակցված կողմերի հետ գործարքները.

Կապակցվածության բնույթը	Գործարքի տեսակը	Մնացորդ 31/12/2019թ. հազ.դրամ	Մնացորդ 31/12/2018թ. հազ.դրամ
Վերջնական վերահսկող անձ	Տրամադրված վարկ	142,937	146,094
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող ընկերություն	Տրամադրված վարկ	665,472	326,550
Ղեկավարություն	Տրամադրված վարկ	49,385	17,817
Մայր կազմակերպություն	Ստացված փոխառություն	412,563	400,356

Կապակցվածության բնույթը	Գործարքի տեսակը	2019թ. հազ.դրամ	2018թ. հազ.դրամ
Վերջնական վերահսկող անձ	Տոկոսային եկամուտ	5,040	11,543
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող ընկերություն	Տոկոսային եկամուտ	55,585	3,383
Ղեկավարություն	Տոկոսային եկամուտ	3,965	110
Մայր կազմակերպություն	Տոկոսային ծախս	(19,845)	(4,911)

Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրությունները ներկայացված են ստորև:

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

	2019թ. հազ. դրամ	2018թ. հազ. դրամ
Աշխատավարձ, այլ հատուցումներ	38,423	29,156

18. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ներդրումների գծով պարտավորություններ:

Ընկերությունը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որևէ կողմի պարտավորությունների համար երաշխավորություն չի տրամադրել:

Ընկերության հանդեպ հարուցված դատական հայցերը 31.12.2019թ. դրությամբ էական գումարային պահանջ չեն պարունակել:

19. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ

Ընկերությունը ՖՀՄՍ 16-ին անցումը կատարել է 2019թ. հունվարի 1-ին: Ընկերությունը որոշել է չվերաներկայացնել համեմատական տվյալները նշված ստանդարտի ընդունման արդյունքում և ֆինանսական հաշվետվություններում ճանաչել համապատասխան ակտիվ և պարտավորությունը՝ ստանդարտի առաջին որդեգրման ամսաթվին (2019թ. հունվարի 1-ին) :

ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցության մանրամասները բերվում են ստորև:

Ուժի մեջ մտած 2019թ. հունվարի 1-ից ՖՀՄՍ 16-ը փոխարինել է ՀՀՄՍ 17 Վարձակալություն ստանդարտին:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է վարձակալի միասնական հաշվառման մոդել, որը պահանջում է ակտիվների և պարտավորությունների ճանաչում վարձակալությունների գծով, բացառությամբ,
ա) կարճաժամկետ վարձակալություններ, և
բ) վարձակալություններ, որոնց դեպքում հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է հիմնական պահանջները, ինչ որ ներկայացվում էր ՀՀՄՍ 17-ի կողմից: Ընկերությունը հանդես չի գալիս որպես վարձատու:

Անցման մեթոդ և գործնական մոտեցումներ
Ընկերությունն ընդունել է ՖՀՄՍ 16-ը 2019թ. հունվարի 1-ին առանց վերաներկայացնելու համեմատական տվյալները:

ՖՀՄՍ 16 ներկայացնում է որոշակի գործնական մոտեցումներ, ներառյալ նրանք, որոնք վերաբերում են ստանդարտի սկզբնական ընդունմանը: Ընկերությունը ՖՀՄՍ 16 ընդունման ժամանակ կիրառել է հետևյալ գործնական մոտեցումները այն վարձակալությունների նկատմամբ, որոնք դասակարգվել են որպես գործառնական վարձակալություն.

(ա) Միասնական զեղչման դրույքի կիրառում համեմատելի պայմաններով վարձակալությունների պորտֆելին,
(բ) Բացառության կիրառում՝ չճանաչելու օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և պարտավորություն այն վարձակալությունների գծով, որոնց ժամկետը ստանդարտի առաջին կիրառման ամսաթվին 12 ամից պակաս է:
Որպես վարձակալ Ընկերությունը դասակարգել է իր վարձակալությունները որպես գործառնական և ֆինանսական իր գնահատականի հիման վրա, արդյոք էականորեն բոլոր ռիսկերը և օգուտները անցել են իրեն, թե ոչ: ՖՀՄՍ 16-ի համաձայն Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և պարտավորություններ իր վարձակալությունների մեծամասնության գծով:

Ընկերությունը չունի այնպիսի վարձակալություններ, որոնց հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, կամ որոնք կարճաժամկետ են (12 ամիս և պակաս ժամկետով):

ՖՀՄՍ 16-ի ընդունման արդյունքում Ընկերությունը ճանաչել է հետևյալ օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալական պարտավորություն.

Դասակարգում ՀՀՄՍ 17	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	Վարձակալական պարտավորություն
Գործառնական վարձակալություն	Գրասենյակի տարածք՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվել է վարձակալական պարտավորության գումարի չափով	Չափվել է վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված Ընկերության կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքով 2019թ. հունվարի 1-ի դրությամբ: Ընկերության կողմից լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման դրույքը հավասարվում է դրույքին, որով Ընկերությունը հնարավորություն ունի ներգրավել փոխառու միջոցներ անկախ փոխատուից: Հաշվարկներում կիրառվել է 10.1%. միջին կշռված դրույքը:

ՖՀՄՍ 16-ի ընդունման ազդեցությունը 01.01.2019թ. Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա բերվում է ստոր.

	31 դեկտեմբեր 2018թ. հազ. դրամ	ՖՀՄՍ 16 1 հունվար 2019 հազ. դրամ
Ակտիվներ		
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	-	57,886
Պարտավորություններ		
Վարձակալական պարտավորություն	-	57,886

20. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտները ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի համախառն գումարի նկատմամբ բացառությամբ ձեռքբերման դրությամբ արժեզրկված կամ ակտիվի գործողության ընթացքում վարկային ռիսկի էական վատթարացման հետևանքով արժեզրկված ակտիվների, որոնց դեպքում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կիրառվում է ակտիվի ամորտիզացված արժեքի հիման վրա:

Տոկոսային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի և ծախսի բաշխման մեթոդն է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը:

Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Արտարժութային գործարքներ0

Ընկերության գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակած փոխարժեքով: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից գոյացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը, նպատակները և այդ քաղաքականության կիրառումը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, ֆինանսական ակտիվների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը ,
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների ակնկալիքները:

Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և վարկավորման հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև որպես շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ
Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝
ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),
բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:
Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.
Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև):

բ) «**իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ)**
Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) **«ամորտիզացված արժեքով չափվող»,**
Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերության հիմնական ֆինանսական ակտիվները դասակարգված են որպես «Ամորտիզացված արժեքով չափվող»: Ստորև ներկայացնում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այդ դասի համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ
Այս ակտիվները հիմնականում ներառում են այն ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով(օրինակ՝ հաճախորդներին տրված վարկեր), իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցրած արժեզրկման պահուստին համամասնորեն:

Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են բանկային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները և հաճախորդներին տրված վարկերը: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում:

Արժեզրկում
Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:
12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով պարտականությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Սպասվող պարտքային վնասի չափում
Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացում է ըստ պարտականությունների չկատարման հավանականության աստիճանի կշռված պարտքային վնասի գնահատականը և չափվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ տարբերությունն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Ընկերությունը պետք է ստանա պայմանագրի համաձայն և որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ),

- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեզրկված են հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերություն,

Արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- վարկառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, մասնավորապես պարտականությունների չկատարումը կամ վճարման ուշացումը,
- վարկի պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- վարկառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը:

Վարկը, որի պայմանները վերանայվել են վարկառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է արժեզրկված, եթե գոյություն չունի վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը չստանալու ռիսկն էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Սպասվող պարտքային վնասի գծով պահուստի ներկայացումը ֆինանսական հաշվետվությունում
Սպասվող պարտքային վնասի գծով պահուստը ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների համար նվազեցվում է ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ հիմունքով:

Վարկերի դուրս գրում
Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի դրանք հետ ստանալու իրատեսական հեռանկար: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, որ վարկառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ դուրսգրման ենթակա գումարները մարելու համար բավարար դրամական միջոցների հոսքեր:

Վերադասակարգում
Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանից հետո, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը: Ընկերությունը պետք է վերադասակարգի ֆինանսական ակտիվները, եթե փոխում է այդ ակտիվների կառավարման իի բիզնես մոդելը: Ակնկալվում է, որ նման փոփոխությունները չափազանց հազվադեպ կլինեն: Այս փոփոխությունները որոշվում են Ընկերության վերադաս ղեկավարության կողմից՝ արտաքին կամ ներքին փոփոխությունների արդյունքում և պետք է նշանակալի լինեն Ընկերության գործունեության համար և տեսանելի՝ արտաքին կողմերի համար:

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.
Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով

շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ
Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Բանկերից և այլ փոխատուներից ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագայում նման տոկոսակիր պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, համաձայն որի՝ պարտավորության մարման ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում տոկոսային ծախսերի հաշվարկը կատարվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն դրույքի կիրառմամբ: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության պայմաններից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են գործարքի հետ կապված սկզբնական ծախսերը, մարման ժամանակ վճարվելիք այլ հավելյալ վճարներ, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները:

Բաժնետիրական կապիտալ
Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Շահաբաժիններ
Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու՝ Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետաձգված հարկեր
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գուդվիլի սկզբնական ճանաչումից,
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա,
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

21. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

ա) Կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը

2020 թվականի հունվարի 30-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը («ԱՀԿ») հայտարարեց առողջապահական գլոբալ արտակարգ իրավիճակ Չինաստանի Վուհան քաղաքում ծագած կորոնավիրուսի նոր շտամի պատճառով («COVID-19 բռնկում»), ինչպես նաև նշեց միջազգային հանրության համար առկա ռիսկի մասին, քանի որ վիրուսը տարածվում է ողջ աշխարհում իր ծագման վայրից դուրս: 2020 թվականի մարտին ԱՀԿ-ն COVID-19-ի բռնկումը որակեց որպես պանդեմիա՝ հիմնվելով դրա համաշխարհային ազդեցության արագ աճի վրա:

COVID-19-ի բռնկման ամբողջ ազդեցությունը շարունակում է զարգանալ սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպես այդպիսին, անորոշ է, թե ինչ մասշտաբի ազդեցություն կունենա պանդեմիան Ընկերության ֆինանսական վիճակի, իրացվելիության և գործունեության հետագա արդյունքների վրա: Ղեկավարությունն ակտիվորեն հետևում է համաշխարհային իրավիճակի ազդեցությանն իր ֆինանսական վիճակի, իրացվելիության, գործառնությունների, հաճախորդների, գործունեության ոլորտի և աշխատուժի վրա: Հաշվի առնելով COVID-19 բռնկման ամենօրյա զարգացումները և դրա տարածման սահմանափակմանն ուղղված համաշխարհային գործողությունները՝ Ընկերությունն ի վիճակի չէ գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցությունն իր գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի կամ իրացվելիության վրա 2020 ֆինանսական տարվա համար:

COVID-19-ը կարող է ազդել հաճախորդների տրված վարկերի վրա, և, հետևաբար, դրանց վճարումը կարող է վտանգի տակ լինել: Բացի այդ, որոշ վարկառուներ կարող են ֆինանսական դժվարությունների բախվել, և այդ դեպքում Ընկերությունը կարող է այդ վարկառուների հետ մշակել նոր պայմաններ՝ փորձելով հավաքել վճարման ենթակա գումարները պայմանները փոխելու կամ վարկառուներին զիջումներ առաջարկելու միջոցով ակնկալվող կորուստները մեղմելու նպատակով: Հաճախորդներին տրված վարկերի հավաքագրելիությունը չափվում է վարկային կորուստների համար պահուստ ճանաչելու միջոցով: Քանի որ Ընկերությունն ընդունել է ՖՀՄՍ 9 *Ֆինանսական գործիքներ* ստանդարտը, որի համաձայն ակնկալվող կորուստները ճանաչվում են՝ հիմնվելով պատմական փորձի, ներկայիս պայմանների և ողջամիտ ու հիմնավորված կանխատեսումների վրա, ապա COVID-19-ի հետևանքով կարող է անհրաժեշտություն առաջանալ այդ գնահատականներում, մասնավորապես՝ ակնկալվող կորուստների կանխատեսումներում ճշգրտումներ մտցնելու:

Չնայած Ընկերությունն այս պահին չի կարող գնահատել COVID-19-ի բռնկման ազդեցության տևողությունը կամ ծանրությունը, եթե պանդեմիան շարունակվի, ապա դա կարող է էական ազդեցություն թողնել Ընկերության 2020 ֆինանսական տարվա հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

բ) բաժնետոմսերի թողարկում

2020թ. հունվարին Ընկերությունը թողարկել է լրացուցիչ 39,800 բաժնետոմս յուրաքանչյուրը 24,000 դրամ անվանական արժեքով, որի արդյունքում լրացուցիչ թողարկված բաժնետոմսերը և համալրված կանոնադրական կապիտալը կազմել են համապատասխանաբար 955,200 հազար դրամ և 4,576,800 հազար դրամ:

Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է Մակարդակ 2-ում դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական դիտարկելի ելակետային տվյալները:

	Իրական արժեք, հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Հաճախորդներին տրված վարկեր	3,702,099	Վարկերի իրական արժեքը չափվում է՝ ապագա պայմանագրային դրամական միջոցների հոսքերը զեղչելով ներկա շուկայական տոկոսադրույքներով:	Մակարդակ 2	19-20% զեղչման դրույք
Ներգարվված փոխառություններ և վարկեր	485,376	Փոխառությունների և վարկերի իրական արժեքը չափվում է՝ ապագա պայմանագրային դրամական միջոցների հոսքերը զեղչելով ներկա շուկայական տոկոսադրույքներով:	Մակարդակ 2	5% զեղչման դրույք